# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

**Չարենցավանի համայնքապետարանը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **սեղմված բնական գազի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2019 թվականի հունվարի 09-ին** կնքված N **<<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-1>>** պայմանագրում **2019 թվականի հունվարի 10-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ապրանքի մատակարարումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

**09.01.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-1>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան <<10>> 01 2019թ.

**Չարենցավանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ-ն,** ի դեմս Կոոպերատիվի նախագահի ժ/պ **Վ. Բավեյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 09.01.2019թ. կնքված N <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-1>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել, որ Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| **<<ԳՆՈՐԴ>>** | **<<ՎԱՃԱՌՈՂ>>** |
|---|---|
| **Չարենցավանի համայնքապետարան** | **<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ** |
| **ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1** | **ք. Չարենցավան, Պարոնյան 2** |
| **ՀՀ ՖՆ ԳՎ** | **<<Արդշինբանկ>> ՓԲԸ** |
| **Հ/Հ 900132111023** | **Հ/Հ 247300003693** |
| **ՀՎՀՀ 03022497** | **ՀՎՀՀ 02803416** |
| | **էլ. հասցեն՝ armmkoop@mail.ru** |
| | **հեռ. (093) 00-16-76** |
| **Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան** | **Նախագահի ժ/պ՝ Վ. Բավեյան** |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Հավելված
09.01.2019թ. կնքված <<ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-1>> ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<10>> 01 2019թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09411700/503 | Սեղմված բնական գազ | 180,000 | 360,000 | 540,000 | 720,000 | 900,000 | 1,080,000 | 1,260,000 | 1,440,000 | 1,620,000 | 1,800,000 | 1,980,000 | 2,160,000 | 2,160,000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒ>>**
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
<<ԱՐՄԻՆԵ>> ԱԿ
ք. Չարենցավան, Պարոնյան 2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 247300003693
ՀՎՀՀ 02803416
էլ. հասցեն՝ armmkoop@mail.ru
հեռ. (093) 00-16-76

Նախագահի ժ/պ՝ Վ. Բավեյան

(ստորագրությունը)
Կ.Տ